ՀԱՍԿԱՆԱԼ ԱՍՏԾՈՒՆ ԱՆՀԱՆԳԻՍՏ ԺԱՄԱՆԱԿ

UNDERSTANDING GOD IN TROUBLED TIME

ԱՄԲ. 1:2-3, ԱՄԲ. 2:1-4, ԱՄԲ. 3:17-19

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

Ամբ. 1:2-3 - 2 Մինչեւ ե՞րբ, ով Տէր, աղաղակեմ ես, եւ դու չ'լսես, զրկուած՝ ձայն տամ
քեզ, եւ դու չփրկես։ 3 Ի՞նչու ես ինձ անօրէնություն տեսնել տալիս, տառապանք ցույց
տալիս. եւ հափշտակություն եւ զրկանք կա իմ առաջին, եւ կռիւ է լինում, եւ վէճ
բարձրանում։ 12 Արդարեւ, դու չե՞ս մեր Տէր Աստուածը սկզբից, ուրեմն չենք մեռնի.
ինչո՞ւ նայեցիր արհամարհողներին եւ չնկատեցիր, երբ ամբարիշտը կուլ էր տալիս
արդարին։ 14 Մարդկանց ծովի ձկների՞ պէս ես դարձնում եւ սողունների՞ պէս, որոնք
առաջնորդ չունեն։ 15 Բաբելոնը նրանց կարթով հանեց, ձգեց իր ցանցով եւ հավաքեց
իր ուռկաններով։

Ամբ. 2:1-4 1 Իմ պահակակէտում կը կանգնեմ, կը բարձրանամ ժայռի վրա եւ կը
տեսնեմ, թէ ինչ կը խօսի ինձ հետ եւ ինչ պատասխան կը տա իմ հանդիմանության։
2 **Պատասխանեց ինձ Տէրը եւ ասաց.** «Պարզորոշ գրի՛ր այդ տեսիլքդ տախտակի վրա,
որպէս զի վազէ նորան կարդացող։ 3 Որովհետեւ տեսիլքիդ կատարման համար
<u>տակաւին ժամանակ կա</u>, այն կը ծագի անպայման եւ չի ստի. Բայց եթէ ուշանա էլ,
սպասիր նորան, որովհետեւ անպատճառ պիտի գա եւ չի ուշանա։ 4 Ահա նա
(թշնամին) գոռոզացել է, նորա հոգին ուղիղ չէ իրանում, **բայց արդարը իր հավատքով
(հավատարմությամբ) պիտի ապրէ։**

Ամբ. 3:17-19 - 17 Թէեւ թզենին չ'ծաղկի, եւ որթատունկի վրա բերք չ'լինի, ձիթենին
բերք չտա, եւ արտերը կերակուր չ'տան, կտրուի ոչխարը փարախից (արածելուց), եւ
արջառ չ'լինի գոմերումը, 18 Սակայն ես Տէրովը պիտի ցնծամ, պիտի իմ փրկութեան
Աստուծով ուրախանամ։ 19 Տէր Եհովան իմ զօրությունն է, եւ իմ ոտները
եղնիկներինի նման է անում. եւ ինձ իմ բարձր տեղերի վրա է ման ածում։ Գլխավոր
երաժշտին իմ նուագարաններով։

ԲԱՆԱԼԻ ԲԱՌ

հավատարմություն - emuwnah - էմունահ

Հաստատուն, Ամրություն, կայունություն = Հնազանդություն

Առաջին անգամ ՀԿ-ում – Ել. 17:12 - 12 Եւ քանի որ Մովսէսի ձեռքերը յոգնելուց ծանրանում էին, Ահարոնն ու Ովրը մի քար առան եւ նրա տակը դրեցին, եւ ինքը նորա վերայ նստեց.Մովսէսը նստեց դրա վրայ, իսկ Ահարոնն ու Ովրը՝ մէկն այս կողմից, միւսն այն կողմից նրա ձեռքերը բռնած բարձր էին պահում, եւ մինչեւ արեւի մայր մտնելը նորա ձեռքերը հաստատուն մնացին։

Հասկանալ ՀԱՎԱՏՔԻ և ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ տարբերությունը

1. **Աբրահամի հավատարմությունը – Իսահակի խոստումը:**
2. **Հակոբի հավատարմությունը – Հովսեփի բացակայության ժաանակ:**
3. **Հովսեփի հավատարմությունը – իր երազի պատասխանը ստանալու համար:**
4. **Մովսեսի հավատարմությունը – խոստացյալ երկրի համար:**
5. **Հեսույի հավատարմությունը – Երիքովը ճեղքելու համար:**

Ի՞նչպես կարող ենք հավատարիմ մնալ դժվարին իրավիճակներում

I. Եփ. 6:17 - Եւ փրկութեան սաղավարտն առէք, եւ Հոգու սուրը՝ որ Աստուծոյ խօսքն է:

2 Տիմ. 3:15-17 - 15 Եւ որ մանկութիւնից դ սուրբ գրքերը գիտես, որոնք կարո՛ղ են իմաստուն դարձնել քեզ փրկութեան համար այն հաւատի միջոցով, որ Քրիստոս Յիսուսի մէջ է։ 16 Աստծու շնչով գրուած ամէն գիրք օգտակար է ուսուցման, յանդիմանութեան, ուղղելու եւ արդարութեան մէջ խրատելու համար, 17 որպէսզի կատարեալ լինի Աստծու մարդը եւ պատ

2. Օրինիր Տիրոջը քո նվագարաններով: